



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱԳՅԻՆ ԱՄԵՐԻԿԱԳՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ**

**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ Կ՛ԱՅՑԵԼԷ**  
**ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ**

Եկեղեցւոյ մը առաքելութեան մաս կը կազմէ հոգեւոր սնունդ մատակարարել նաեւ անոնց, որոնք կեանքի այս կամ այն պատճառներով հեռու մնացած են բարի ու Աստուածահաճոյ ճամբաներէ եւ ինկած՝ բանտերու տխուր խուցերուն մէջ:

Արեւմտեան մեր Թեմը, որ իր առաքելութեան եւ ծառայութեան գործունեութիւնը կը նկատէ յատկապէս մեր նոր սերունդի հոգեւոր, հայեցի ու բարոյական դաստիարակութեան կարեւորութիւնը, նաեւ յատուկ կարեւորութեամբ կը շեշտէ բանտարկեալներու տրուած այցելութիւնները եւ անոնց հոգեւոր սնունդ մատակարարելու անհրաժեշտութիւնը: Թեմիս Առաջնորդ Սրբազան Զօր տնօրինումով, տարիներէ ի վեր կանոնաւոր կերպով հոգեւոր սնունդ կը մատակարարուի Լոս Անճելըսի եւ շրջակայքի հայ բանտարկեալներուն:

Այս ծիրէն ներս, Շաբաթ, 8 Մարտ 2008-ի առաւօտուն, յանուն Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, եւ գլխաւորութեամբ Հայ բանտարկեալներու հոգեւոր մատակարարման ծառայութեան գրասենեակի հայկական բաժանմունքի գլխաւոր խորհրդատու Րաֆֆի Սրկ. Կարապետեանի, երիտասարդաց պատուիրակութիւն մը այցելեց Mira Loma-ի բանտը:

Տեղի ունեցաւ եկեղեցական արարողութիւն, եւ ապա հոգեւոր երգերու ներկայացում Սալբի Զելէշեանին կողմէ:

Արարողութեան ակարտին յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Հոգշ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ Րաֆֆի Սրկ. Կարապետեան հայ եւ օտար ակելի քան 200 բանտարկեալներուն փոխանցեցին Ս. Չատկուան բարեմաղթութիւնները եւ քաջալերեցին անոնց հաստատ մնալու եւ երբեք չթուլնալու Աստուծոյ հանդէպ իրենց վստահութեան ու հաւատքին մէջ:

Յատուկ կարգադրութեամբ եւ արտօնութեամբ, այս առթիւ բանտարկեալներուն հրամցուեցաւ քաղցրակէք:

Անհուն եր առթուած ուրախութիւնը եւ երախտագիտական արտայայտութիւնները այս այցելութեան առթիւ, որ իբր քաղցր յուշ պիտի փորագրուած մնայ այդտեղ համախմբուած իւրաքանչիւր հայ բանտարկեալի հոգիին ու սրտին մէջ:

«Տէ՛ր, տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն, ... բանտարկելոց ազատութիւն»:

## **PRELACY YOUTH DELEGATION VISITS ARMENIAN INMATES**

Under the leadership of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, for many years now representatives from the Prelacy visit Los Angeles area correctional facilities to offer spiritual guidance to Armenian inmates.

On the morning of Saturday, March 8<sup>th</sup>, on behalf of the Prelate, a delegation of youth led by Chaplain Raffi Garabedian, visited the Mira Loma Detention Center where they conducted church services. Among those in the delegation was Salpi Keleshian who performed spiritual songs for the inmates.

At the conclusion of the service, Very Rev. Fr. Barthev Gulumian and Chaplain Raffi conveyed the Prelate's wishes for a blessed Easter to over two hundred Armenian and non-Armenian inmates, and encouraged them to remain strong in their faith and trust in God.